№ 189 Հոկտեմբերի 13 Շաբաթ 1882 Հոկտեմբերի 13 Շաբաթ № 189

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ջրանցքի հարցը։ — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Մօզդոկից։ Նամակ Նուխուց։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Պարսկաստանից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՋՐԱՆՑՔԻ ՀԱՐՑԸ

—

„Մշակի“ տաս տարվայ գործունէութեան ընթացքում մենք շատ անգամ խօսել ենք Ջրանցքի մասին, Թիֆլիսում մաքուր Ջուր ունենալու անհրաժեշտութեան մասին։

Մենք շատ անգամ յայտնել ենք այն միտքը որ մեր հասարակութեան սովորութիւնն է չը գնահատել եղածը և ուզենալ անպատճառ անել ամեն բան շքեղ կերպով և մեծ գիրքով։ Կայ Թիֆլիսում Ղորղանեանի Ջրանցքը. բայց մենք նրանից օգուտ չենք ուզում քաղել, այլ կամ թուլխների կեղտոտ Ջուր ենք խմում, կամ ուղղակի դիմում ենք արտասահմանեան ձեռնարկողներին և յանձն ենք առնում մեծ ռիսկով կապվել այդ արտասահմանեան ձեռնարկողների հետ։ Այն ինչ, եթէ քաղաքը ուշադրութիւն դարձներ պ. Ղորղանեանի վրա, նա կարող էր նշանակել նրան մի յայտնի օժանդակութիւն, որպէս զի նա մեծացներ իր գործը և կարող էր պարտաւորեցնել նրան այն գնով տալ Ջուրը քաղաքացիներին, որ կը նշանակեր նոյն իսկ քաղաքը, իսկ քաղաքի աղքատ ազգաբնակութեանը ձրիապէս տալ Ջուրը։

Բացի սրանից մենք շատ անգամ յայտնել ենք այն ճշմարտութիւնը, որ Ջուրը անհրաժեշտութիւն է և ոչ շռայլութիւն, ինչպէս օրինակ գազի լուսաւորութիւն, կամ մի այլ ձեռնարկութիւն և այդ պատճառով Ջուրը, Ջրանցքի էկսպլուատացիան, չէ կարելի տալ այնպիսի ձեռնարկողներին, որոնք կուզենան այդ անհրաժեշտ պիտոյքից իրանց համար մեծ շահ ունենալ։ Ջուրը, եթէ հնարաւոր է, քաղաքը պէտք է ձրիապէս տայ քաղաքի ամբողջ ազգաբնակութեանը, կամ գոնէ մի յայտնի մասին միայն փողով, այն էլ էժան գնով, իսկ քաղաքի մնացած ազգաբնակութեանը կատարելապէս ձրի, ուր մնաց որ քաղաքային վարչութիւնը, Ջրի, այդ ամենաանհրաժեշտ պիտոյքի մատակարարելու պատճառով նոր հարկեր նշանակի քաղաքի ազգաբնակութեան վրա։

Մենք ուշադրութեամբ կարդացինք քաղաքային վարչութիւնից մեզ ուղարկված զեկուցումը Ջրանցքի մասին և դուրս բերինք այդ ընթերցանութիւնից հետևեալ տպաւորութիւնը։

Զեկուցումը շատ լաւ է, գոնէ այդ տպաւորութիւն է գործում նրա ամբողջութիւնը։ Բայց երբ մարդս սկսում է մտածել նրա մանրամասնութիւնների մասին, այլ և այլ տարակուսանքներ և կասկածանքներ են ծնվում մարդուս գլխում։

Քաղաքը կապվում է մի բելգիական ընկերութեան հետ, որպէս զի սա պարտաւորվի Ջրանցք շինել Թիֆլիսում։ Այդ ձեռնարկութեան վրա քաղաքը նշանակում է 600,000 բուբլու նախահաշիւ, բացի սրանից քաղաքը հրատարակում է օբլիգացիաներ, որ պարտաւորվում է $2^1/_2$ տարվայ ընթացքում յանձնել բելգիական ձեռնարկողին, Ջրանցքը մնում է ձեռնարկողի սեփականութիւն, մինչև որ քաղաքը լիակատար հատուցումն չանի նրան խոստացած գումարի։ Բայց եթէ քաղաքը իր պարտաւորութիւնները չը կատարի, նա, այսինքն, բելգիական առևտրական տունը, իրաւունք ունի սեփականացնել Ջրանցքի էկսպլուատացիան, վերցնելով քաղաքացիներից Ջրի գործածութեան համար քաղաքից նշանակած սակագինը։

Ահա այս վերջին կէտի մէջն է ամբողջ հարցը։

Ի հարկէ պէտք է յոյս ունենալ որ քաղաքին ծանր չի լինի 600,000 բուբլ նախահաշիւը, որ գումարը նա կարող է ձեռք բերել միմիայն փոխառութեամբ, ի հարկէ յոյս պէտք է ունենալ, նոյնպէս, որ քաղաքը միջոց կունենայ հրատարակել օբլիգացիաները և ճշդութեամբ վճարել բելգիական ընկերութեանը իր յանձն առած պարտաւորութիւնները։

Բայց եթէ, ինչպէս ինքն քաղաքային վարչութիւնը իր զեկուցման մէջ կարելութիւն է ընդունում, որ քաղաքը անկարող կը լինի կատարել իր յանձն առած պարտաւորութիւնները,—այդ դրութեան հետևանքը ի՞նչ կը լինի։ Ջրանցքը և նրա էկսպլուատացիան, նրա արդիւնաշահելը կանցնի մի օտար ձեռնարկողի ձեռքը, որ լրացնելու համար այն, որ պէտք է ստանար սկզբնական պայմանով քաղաքային վարչութիւնից, ստիպված կը լինի այդ գումարը լրացնել արդիւնաշահելով Ջրանցքը, վաճառելով քաղաքացիներին և քաղաքին Ջուրը քաղաքային վարչութիւնից նշանակված սակագնով։

Բայց նոյն իսկ այդ կէտի մէջն է ամբողջ տարակուսանքը։ Եթէ քաղաքային վարչութիւնը անձիշդ հանդիսանայ իր յանձն առած պայմանի կատարման մէջ, ի՞նչ սակագին կը նշանակի նա, որպէս զի քաղաքային աղքատաբնակութեան հաշվով բաւականացնի ձեռնարկողին, իր յանձն առած պարտաւորութիւնը չը կատարած ժամանակ։ Այդ սակագնի չափը մնատաւորապէս էլ չէ յայտնում մեզ քաղաքային վարչութեան զեկուցումը։

Նախ և առաջ այդտեղ կայ մի պրինցիպական խնդիր. իրաւունք ունի՞ արդեօք քաղաքային վարչութիւնը Ջրի պէս առաջին հարկաւորութեան մի մթերքի վրա, որ քաղաքի ազգաբնակութեան եթէ ոչ ամբողջութիւնը, գոնէ մեծ մասը պէտք է ձրիապէս վայելէր մի բարեկարգ քաղաքում, կամայական կերպով նշանակել այս կամ այն սակագին, Ջրանցքի ձեռնարկողին բաւականացնելու համար, այն պատճառով որ ինքն, այդ վարչութիւնը, անկարող եղաւ ճիշդ գանվել իր վճարումների հատուցման մէջ։ Իսկ բացի այդ պրինցիպական խնդրից, կայ այստեղ և մի գործնական խնդիր. ինչքան բարձր էլ լինի քաղաքային վարչութիւնից նշանակված սակագինը, եթէ նա իր պարտաւորութիւնը չը կատարի բելգիական առևտրական տան վերաբերութեամբ, արդեօք այդ սակագնից գոյացած ընդհանուր գումարը կը հաւասարվի այն գումարի հետ, որ օտար ձեռնարկողը պէտք է ստանար, եթէ քաղաքային վարչութիւնը նրա վերաբերութեամբ ճիշդ գտնվեր իր վճարումները հատուցանելում։

Եւ եթէ այդպէս կը լինի, ձեռնարկողը իրան բաւականացրած չը տեսնելով, կատարեալ իրաւունք չի՞ ունենայ, արդեօք, մի ահագին դատ բանալ քաղաքային վարչութեան դէմ։ Այդ մեր ենթադրութիւնը աւելի էլ հաւանականութիւն ունի այն պատճառով, որ եթէ քաղաքային վարչութենից նշանակված սակագինը Ջրի համար շատ բարձր կը լինի, ոչ մի օրինական միջոց չը կայ աշխարհիս երեսին, որով այդ վարչութիւնը կարողանար ստիպել քաղաքի ազգաբնակութեանը որ սա անպատճառ իր Ջուրը վերցներ Ֆանդէրլատի ընկերութենից, և ոչ թէ ինքն կեղտոտ, բայց իր համար աւելի էժան Ջուր կրէր Կուր գետից, որ յոյս ունենք, երկու ու կէս տարվայ ընթացքում ցամաքելու չէ, չը նայելով որ քաղաքային վարչութիւնը իր պարտաւորութիւնն էլ չը կատարէր բելգիացի Ֆանդէրլատի վերաբերութեամբ։

Այն ժամանակ, ի հարկէ, ձեռնարկողը մեծ վնաս կրելով, կատարեալ իրաւունք կունենայ դատ բանալ քաղաքային վարչութեան դէմ։

Եւ երևում է որ Ֆանդէրլատի ընկերութեան ձեռնարկողները այնքան միամիտ չէն, և առաջուց շատ լաւ են հասկացել այն, ինչ որ մենք հիմա ենք ասում, նախատեսել են ինչ որ կարող է պատահել։ Դրան ապացոյց կարող է լինել այն, որ բելգիական ընկերութիւնը իր հեռագրական պատասխանի մէջ դէպի քաղաքային վարչութիւնը ասում է. „ինդրում ենք դումային ներկայացնել մեզ լրացուցիչ ապահովութիւն մի որ և է, օրինակ գնահատական, հարկի ձեով։“ Եւ վերջն աւելացնում է. „եթէ քաղաքը կը ներկայացնի մեզ այդ ապահովութիւնը, նա դրանից իր համար մեծ օգուտ կը դուրս բերի։“

Նշանաւոր է որ բելգիական ձեռնարկողը գործ է ածում ոչ թէ շահ, այլ օգուտ բառը։

Արդեօք զեկուցման կազմողները, որոնք փառաւոր կերպով ստորագրել են իրանց անունները այդ զեկուցման տակ, պ. պ. Մատինով, Թամամշեվ, Պոպով և Խոսրօեվ, չեն մտածել որ այդ խօսքերը մի տեսակ նախազգուշութիւն են, որ բելգիացին, որպէս բուն եւրոպացի, անում է քաղաքին շատ քաղաքավարի ձևով և որոնք մի որ և է ուրիշ լեզուով նշանակում են. եթէ դուք ինձ կապահովացնէք լրացուցիչ որ և է քաղաքային հարկով, դա ձեզ համար այն օգուտը կունենայ, որ դուք կազատվէք դատասանական գործի ենթարկվելու վտանգից, եթէ ձեր յանձն առած պարտաւորութիւնները չէք կատարի և միայն կուզենաք ապահովացնել ինձ այն սակագնով, որ կը նշանակէք քաղաքացիների վրա իմ Ջրանցքից Ջուրը գործածելու համար, որ, ի հարկէ, հաստատ բան չէ և երբէք ես չեմ կարող յոյս դնել որ դա ինձ կապահովացնի, եթէ դուք ձեր պարտաւորութիւնները չէք կատարի, որի կարելիութիւնը դուք ինքներդ էք ընդունում ձեր զեկուցման § 11 մէջ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

—

Սեպտեմբերի 27-ին

Ներկայ ուսումնական տարվայ առաջին ամիսը ահա անցնում է և դեռ ևս մեր ուսումնարաններում չէ սկսվել կանոնաւոր դասընթացք։ Անցեալ ուսումնական տարվայ վերջերում հեռացաւ մեզանից մեր հայոց դպրոցի տեսուչը։ Լատինական առածը ասում է թէ մեռողների վրա կամ պէտք է լաւն ասել, կամ ոչինչ. նոյնպէս պէտք է վարվել և հեռացողների, իրանց պաշտօնը ձգողների հետ։ Ուրեմն լաւ է չը խօսենք մեր նախկին տեսչի մասին։

Հասարակութիւնը սպասում է որ նշանակվի մեր ուսումնարանների վրա մի եռանդուն տեսուչ, որ բարենորոգէր միանգամայն մեր ուսումնարանները։ Ուսուցչական ժողովից էլ մենք շատ էինք սպասում, բայց մեր բոլոր ակնկալութիւնները ի զուր անցան։ Ժողովրդական առածն ասում է, «հին քաղաքին նոր օրէնք չի դրվի։» Մեր ուսուցիչների համար բոլորովին անհասկանալի են եղել այն հարցերը, որոնցով զբաղվել է հայոց ուսուցչական ընդհանուր ժողովը։ Մենք հեռուից, դաւառներից լսելով մի քանի հարցերի վրա երկար խօսելը, շատ ուրախացանք, կարծելով թէ մեր գաւակները միանգամայն պէտք է ազատվեն ծեծից, թէ նրանք այլ ևս չը պէտք է հայհոյվեն ուսուցիչներից։ Բայց զուր էին մեր յոյսերը. այդ բոլորը չը վերացաւ մեր դպրոցների պրակտիկայից։ Ուսուցիչների վարմունքն էլ ազդեցութիւն ունի, ի հարկէ, և աշակերտների վրա. նրանք էլ ընտելանում են միմեանց հայհոյելուն։

Ուսումնարանը պէտք է բարոյական կրթութիւն տայ իր սանկիներին և ընդհանուր մտաւոր զարգացում, համաձայն ընդհանուր ժողովում ընդունված ծրագրին, բայց ինչով կարող ենք հասնել մեր նպատակին. չոր ու ցամաք կանոններ ասելով թէ բարոյական կենդանի օրինակով։ Դիցուք թէ ուսուցիչը ասում է աշակերտին «մի հայհոյիր.» ինչպէս աշակերտը հաւատայ, ու այլ ևս չը հայհոյի, երբ ամեն օր նոյն ուսուցչի բերանից հայհոյանք է լսում։

Մեր դպրոցի պատրաստական դասատների տեղ, ահա երկու տարի է որ բաց են արել թաղական ուսումնարաններ, որտեղ նշանակված են ուսուցիչներ տարեկան 60 բուբլ ռոճիկով։ Այդ տեսակ ռոճիկով ուսուցիչը իր չոր գլուխը, ինչպէս ասում է ժողովուրդը, չէ կարող պահել, ուր մնայ եթէ խեղճ ողորմելին ընտանիք ունի։ Եւ նա պէտք է ամեն օր դաս տայ մի քանի տասնեակ աշակերտների։ Դեռ մեր հոգաբարձուները չեն հասկացել որ նախակրթարանների ուսուցիչները պէտք է լինեն հմուտ, հասկացող, մանկավարժ ուսուցիչներ և ոչ թէ հնադարեան խալֆաներ։ Մեր թաղական ուսումնարաններում, ի միջի այլոց, դեռ գործ են ածում մանկավարժութենից արդէն վաղուց դատապարտված պատիժը, որպէս վերին աստիճանի անմարդասէր. երեխան հինգ բոպէով դասին ուշացաւ և ահա ուսուցիչը նրան ոտքի վրա կանգնեցնում է երկու, երեք ժամ շարունակ։ Եթէ կայ մի քաղաք մեր երկրում, որ պահած է իր նահապետական դաստուրութեան ձևերը ուսումնարաններում, դա

Ախալցխան է։ Եւ այդ ամենի մասին ոչինչ տեղեկութիւն չունի թեմական վերատեսուչ, պ. Բարխուդարեանց, որ նստում է Թիֆլիսում և որի իշխանութեանը ենթարկվում են հայոց դպրոցները Ախալցխայում էլ։

Հետևելով «Վարժարան» ամսագրի առաջնորդող յօդուածին, թէ՝ մեզ բաւական չէ պախարակել մի որ և է հաստատութիւն, այլ պէտք է, հարկաւոր է միջոցներ էլ որոնել նրան իր անկեալ դրութենից բարձրացնելու համար,—ես էլ իմ կողմից պարտք եմ համարում մի քանի առաջարկութիւններ անել մեր դպրոցների վերաբերութեամբ։

Հարկաւոր է. 1) արձակել այն ուսուցիչներին, որոնք բարձրացել են այդ պաշտօնին իրանց կողմնակիցներով, նրանց, որոնք ուսուցիչ են վարձվել աղքատութեան պատճառով, 2) արձակել նրանց, որոնք բացի վարժապետութենից, պարապում են և վաճառականութեամբ և մանրավաճառութեամբ, ուսուցչութիւնը երկրորդական բան համարելով, 3) արձակել ոգէտներին, 4) հրաւիրել մի հմուտ, մանկավարժ տեսուչ, որ յօդուտ ուսումնարանի գործէր, պաշտպանէր աշակերտների և աշակերտուհիների շահերը։

Հ.

ՆԱՄԱԿ ՄՕԶԴՕԿԻՑ

Հոկտեմբերի 1-ին

Մոզդոկը մեր Ղզլար քաղաքին մօտիկ լինելով, ինձ համար ամօթ էի համարում այդ հայաբնակ քաղաքը չը տեսնել։ Ուստի անցեալ օգոստոսին ճանապարհորդելով այնտեղ առաջին անգամ, ներս մտնելով քաղաքի մէջ այդ փոքրիկ քաղաքի դիրքը, իր քարաշէն և փայտաշէն տներով, իր սալայատակ փողոցներով համեմատելով Ղզլարի հետ, ինձ վրա լաւ տպաւորութիւն թողեց։ Այդ քաղաքի մանրամասնութիւնը նկարագրելու համար, մանաւանդ վերաբերեալ եկեղեցիներին և հոգևորականներին, թողնում եմ մի այլ ազատ միջոցի, բայց այժմ, կամենում եմ «Մշակի» ընթերցողներին յայտնել այն տխուր հանգամանքը, որ ես անձամբ ստուգեցի։

Իմ առաջին պարտաւորութիւնս էր այցելել Մոզդոկի հայոց երկսեռ դպրոցներին, բայց իմ կոյր բաղդից իմ ուղած ուսուցիչներին չը գտայ այնտեղ, որոնցից աւելի կարող կը լինէի մանրամասն տեղեկութիւններ ժողովելու ուսումնարանների մասին։ Միայն պ. Վ. Գերելեանցն էր, որ նորեկ ուսուցիչ էր, որի հետ ծանօթանալով, խնդրեցի նրան ցոյց տալ ինձ ուսումնարանները, և նա ուրախութեամբ ցոյց տուեց ինձ։ Ինձ ասեցին, որ պ. Մելքումեանցն բացակայ է և գտնվում է Թիֆլիսի ուսուցչական ժողովում, իսկ մնացեալ ուսուցիչները ռոճիկները պակասեցնելու պատճառով հեռացել են Մոզդոկից։ Որովհետև ամառնային արձակուրդի ժամանակ էր, պարապմունք չը կար, միայն արժանացայ տեսնել դասատները և դպրոցի զրաղարանը։ Ես գնացի արական դպրոցը, որ Աստուածամօր եկեղեցու բակումն էր գտնվում, որը շինել է իր ծախքով պ. Գ. Թուշմալեանցը, իր որդու յիշատակի համար։ Ուսումնարանի տունը պատշաճաւոր էր, սենեակները մաքուր, միայն մի անյարմարութիւն նկատեցի, այն է, պատրաստական դասատան պատից կախած էր պ. Թուշմալեանցի հանգուցեալ որդու դաղաղով հանված պատկերը։

Արական դպրոցը բաղկացած է երկու դասատնից—մի պատրաստականից և մի առաջինից։ Տեսայ զրաղարանը և հաւանեցի, այն պատճառով, որ կային այնտեղ աշակերտաց ընթերցանութեան համար մատչելի զրեանք։ Այն տեղից գնացի տեսնելու օրիորդական դպրոցի նոր շինութիւնը, որը նոյնպէս գտնվում է ս. Ստեփաննոս եկեղեցու բակում։ Շինութիւնը դեռ ես կիսատ է, բայց շինութեան բոլոր պարագայքը լիովին պատրաստ։ Իմ ուրախութեանս չափ չը կար, երբ որ ասեցին ինձ թէ, այդ շինութիւնը մի մտնաւոր մարդ է շինում։ Ինչպէս երևեցաւ, շինութիւնը իր զիրքով, իր ընդարձակ սենեակներով, և թատրոնական բեմի համար ձևած առանձին մի մեծ սենեակով, շատ փառաւոր շինուած է օրիորդական դպրոցի համար, որից զուրկ է դեռ ես՝ հարուստ համարված մեր Ղզլարը։ միայն մի պարոն ունէինք, որը խոստացաւ օրիորդական դպրոց շինելու, այն էլ խաբեց մեզ։ Ես դարձայ դէպի ինձ շրջապատողները և ասեցի «Երանի ձեզ, պարոններ, որ Մոզդոկում այդպիսի բարի մարդ ունէք, որը մենակ մի մարդ իր փողով շինում է ձեր աղջիկների համար այս լուսաւորութեան տունը։ Ինչպէս տեսնում եմ, եթէ չեմ սխալվում, 20,000 ռուբլի ծախք նստելու է այդ ազնիւ պարոնի վրա։» Հարցրեցի այդ բարեգործ պարոնի տունը, և կամեցայ անձամբ շնորհակալութիւն յայտնել պ. Պետրոս Գեանջումեանցին, որ է նոյն ինքն այդ շինութիւն անող բարերարը։ Բարեբաղդաբար նոյն միջոցին պատահեց ինձ պ. Յովհաննէսեանց, իմ նախկին ընկերս Լ. ճեմարանի և նա ինձ առաջնորդեց դէպի Նրա խանութը։ Սիրտս լի ուրախութեամբ, տեսնելով պ. Գեանջումեանցին, ձեռքը սեղմեցի ասելով. «Փառք և պատիւ ձեզ, պարոն, որ դուք ձեր հայ հասարակութեան համար ձեր ծախքով մի այդպիսի փառաւոր և վայելուչ շինուածք էք կառուցել օրիորդական դպրոցի համար, մանաւանդ թատրոնի բեմն էլ մէջը, որի մասին ընդունեցէք խնդրեմ իմ և իմ ընկերների կողմից սրտեռանդ շնորհակալութիւն»։ Պ. Գեանջումեանցն պատասխանեց, թէ՝ փառք Աստուծոյ, որ գոնէ մէկն էլ ա ինձանից շնորհակալ եղող եղաւ, մեր մոզդոկցիք շնորհակալ չեն, ասում են, իբր ես շատ մեծ եմ վերառել շինութիւնը, մենք չենք կարող նրա վերանորոգութիւնները անել։ Բայց ես ասեցի. «դուք ձեր գործը, խնդրեմ, ինչպէս սկսել էք, այնպէս և վերջացրէք, թող խօսեն ինչքան կամենան. այդ խօսողները ձեր օրերիմ թշնամիներն են. ասած է. «շունը հաչի, քամին կը տանի։» Եւ նա խոստացաւ շուտով վերջացնել շինութիւնը։ Վերջապէս Մոզդոկում տեղեկացայ, որ պ. Գեանջումեանցի թշնամիները, որոնք են մի քանի ականաւոր պարոններ, կամենում են այդ փառքը նրանից խլել և դանազան անտեղի պատճառներ են բերում՝ ասելով, թէ «պ. Պ. Գեանջումեանցը շատ ընդարձակ է վերառել շէնքը, որ մենք ամենևին նրա վերանորոգութիւնը չենք կարող անել և այլն։» Վայ այն քաղաքին, ուր մի հասարակ մարդ կարողանում է մի չքեղ օրիորդական դպրոց կառուցանել, իսկ ամբողջ քաղաքը նրա վերանորոգութիւնը չէ կարող անել 5 տարուց յետոյ. գոնէ և նկատի առնեն այժմեան օրիորդական դպրոցի տարեկան տան վարձը 200 ռուբլի, որ 5 տարուց կանի 1000 ռուբլի, թողնելով իրանց տոկոսիքը։ Ես շատ եմ զարմանում մոզդոկեցիների վրա, ինչու են ուշադրութիւն դարձնում այդպիսիներին, թող նրանք ինչ ուզեն խօսեն։ Մոզդոկը Ղզլար չէ, որ մի քանի անհոգ մարդկանց ձեռին խաղալիք լինի։

Ա.

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

Հոկտեմբերի 1-ին

Սեպտեմբերի 22-ին երկաթուղու գնացքներից մէկովը Թիֆլիսից ուղևորվեցայ դէպի հայրենիքս՝ Նուխի։

Մի կողմը թողնելով ուղևորութեանս միջոցում պատահած բոլոր անյարմարութիւնները, այսքանը միայն կասեմ, որ թէև շատ կէտեր դեռ ես անպատրաստ են բոլորովին, բայց և դծի այն մասերը, որոնք իսկապէս պատրաստված են համարվում, ներկայացնում են մի վատնդաւոր ճանապարհ, ոչ միայն ուղևորների, այլ և նոյն իսկ շոգեկառքերի կառավարիչների համար։ Թէ Թիֆլիսից մինչև Ելիսաւետպոլի կայարանը, և թէ նրանից յետոյ դէպի Բաքու տանող դիծը մինչև Լեռքի կայարանը այնպէս անհաւասար է շինած, որ շատ տեղ, բաւական մեծ տարածութեան վրա, կառքերը չարունակ ձախ թեկ վրա թեքված դիրքով են գնում։ Տեղ տեղ էլ կառքերը յանկարծակի այնպէս են բարձր ու ցածր անում, որ կարծես շոգենաւի վրա էք գնում՝ ալիքների երեսին, իսկ շատ անգամ էլ նմանում է գոմշի սայլերին, երբ նոքա գնալիս լինէին մի քարքարոտ ճանապարհով։ Լեռքի հասնելուն երկու իշեան մնացած՝ դիծը տարած է այնպիսի ճահճային տարածութեան վրայով, ուր շոգեկառքերի դռներից նայելիս էլ յայտնապէս երևում է հողի նստելը, ցածրանալը ծանր բեռնաւորված շոգեկառքերի ճնշողութեան տակ։ Իսկ ամենից սարսափելին՝ կուր գետի վրա շինած փայտեայ կամուրջին անցնելն է։ Երբ կառքերը մօտենում են կամուրջին, շոգեկառքի կառավարիչները այնպէս ստէպ ստէպ չվացնում, աղաղակ են բարձրացնում, որ ակամայ մտածում ես թէ՝ «երևի իրանք էլ են երկիւղ կրում կամուրջի քայքայվելուց»։

Երբ դեռ բոլորովին պատրաստ համարված կէտերն էլ դեռ ես կարօտ են նորոգութեան և երբ Կուր գետի վրա շինած փայտեայ կամուրջը այնպիսի դրութեան մէջ է, որ մի ակնթարթում կարող է քայքայվել 40—60 շոգեկառքերի ծանրութեան տակ և նրանց հետ միասին 200—300 ճանապարհորդի՝ իրանց ապրանքներով ջրին զոհել, իմ կարծիքով աւելի լաւ է կամ ամենևին ոչ ոքի ապրանքը կամ իրան չը վեր առնել, մինչև որ բոլորովին կը կանոնաւորվի ամեն բան, և կամ եթէ ընդունում են մարդիկ և ապրանք, գոնեա գետի կամուրջին հասնելիս, թող կառքերը բաժանեն մասերի և շոգեմեքենան այդ փոքրիկ կառախումբերը կամուրջին առանձին առանձին անցկացնելով, կցէ միմեանց հետ և ապա շարունակէ իր գնացքը, ապա թէ ոչ ուղևորին «անվճար» ընդունելը դեռ ևս իրաւունք չէ կարող տալ յանկարծ 200 հոգի կորցնել ճանապարհի որ և իցէ թերութեան պատճառով, որը հեռու չէ հաւանականութիւնից, որ կարող է պատահել։ Մինթէ երկաթուղու յարգելի ծառայողները կովկասցու գլուխը սխտորի գլխի արժողութեամբ են գնահատում։

Մ. Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թէլաւ, 5 հոկտեմբերի

«Մեղուի» 100-րդ №-ի ազգային բաժինը սկըսվում է այսպէս. «Սեպտ. 7-ին, առաւօտեան նըստին արժ. Աբել քահ. Սուքիասեանցը «կրօնից» դասախօսեց։ Աչքի առաջ ունենալով աշակերտների հասակը (երկրորդ տարվայ աշակերտներ էին), առարկայի վերացականութիւնը և ուսանողի ուսուցանողի անծանօթութիւնը, այդ դասը, մեր կարծիքով, անյաջող անցաւ։ Դասի վերջում տէր-հայրը հետևեալ օրուայ տօնը «Ծնունդ Աստուածածնի 'ի յԱննայէ» պատմեց աշակերտներին։ Դժուար չէ գուշակել թէ քամին որտեղից է փըչում։ Ի՞նչ է նշանակում՝ «դասից յետոյ Աստուածածնի ծնունդը պատմեց»։ Երևում է պարոնը «Աստուածածնայ ծննդեան պատմութիւնը» դասի տեղ չէ ընդունել։ Բացի սրանից՝ ես ենթադրում եմ, որ նա իմ դասախօսութեանս ներկայ եղած չը պիտի լինէր։ Կամ գուցէ պ. յօդուածագիրը «Մշակի» խմբագրի հետ մի որ և իցէ անձնական հաչիւ ունենալով՝ մաղձը ինձ վրա է թափում։ («Մշակի» № 165 ներքին լուրերի մէջ դասախօսութիւնս գովել էին)։ Հաւատացած եղէք, որ եթէ պ. լրատուն «Մշակի» մէջ ինձ վատաբանէր՝—«Մեղուն» անպատճառ կը գովէր։ Ես ամենևին նպատակ չունենալով ինձի գովաբանել,—ուզում եմ մի քանի խօսք ասել «Մեղուի» նկատողութեան առիթով, թէ նա ոչքան ճշմարիտ է։ Իմ դասախօսութիւնից մի քանի օր առաջ ես պ. Նախարարեանից պահանջեցի առաջին—պատրաստական դասատան երեք բաժանմունք, բայց ցանկութիւնս չիրագործվեցաւ։ Դասից առաջ պ. Նախարարեանը յայտնեց, որ ես գործ ունեմ առաջին բաժանման—առաջին տարվայ աշակերտների հետ, բայց դասախօսութեան ժամանակ պարզվեցաւ որ նրանց մէջ կային և երկրորդ տարվայ աշակերտներ։ Այստեղ կարծեմ ես մեղաւոր չեմ։ Ինչ և իցէ, ես բոլորովին չը չփոթվեցայ, այլ սկսեցի երկու բաժանման հետ միասին պարապել, երկրորդ տարվայ աշակերտներին առանձին զբաղմունք չը տալով, որովհետև արդէն ուշ էր և նախապէս պատրաստութիւն էլ չունէի նրանց համար։ Դասից առաջ ես յայտնեցի, որ իմ նպատակս է նկատողութեան—իրականական մեթոդով աշակերտներին դանել տալ Աստուծուն և Նրա ստեղծագործութեան հրաշալիքը։ Ուրեմն դաս չէր կարող վերացական լինել։ Ժողովի անդամներից ինչպէս մի քանիսը ինձ հաւատացրին, դաս չէր կարող վերացական լինել։ Ժողովի անդամներից ինչպէս մի քանիսը ինձ հաւատացրին, նրանք կարծում էին թէ ես պարապում էի նկատողական ուսումից։ Ներկայ եղողներից ով չի խոստովանվի, որ 7 տարեկան մանուկները հարց ու պատասխանով, առանց իմ ասելու խոստովանվեցան որ «աշխարհս ստեղծել է Աստուած և աշխարհից առաջ էլ կար Աստուած»։ Ես յաջող կերպով նպատակիս հասնելով՝ ստացայ խսկոյն աղմկալի ծափահարութիւն։ Կրօնի դասախօսութիւնը տեւեց $^3/_4$ ժամ, իսկ վիճաբանութիւնը—$^1/_4$։ Կարծեմ ամենքին յայտնի է մեր ուսուցիչների կպչողականութիւնը (придирка), բայց նրանք այդ բանի համար նիւթ և առիթ չը գտան։ Վիճաբանողները երեք հոգի էին, բայց նրանք էլ չը կարողացան մի որ և իցէ շօշափելի—խոշոր պակասութիւն ցոյց տալ։ Ահա խօսողներից մինի՝ պ. Մելքումեանցի խօսքերը։ «Ես իմ կողմից շնորհաւորում եմ տէր հօրը և յայտնում եմ խորին շնորհակալութիւն։ Առաջին անգամ եմ լսում այսպիսի յաջող և բոլորովին տարբեր մեր մանկավարժներից կրօնի նոր մեթոդով դասախօսութիւնը»։ Թողնենք այս։ Սուրբ կոյս Մարիամի ծննդեան պատկերը ոչ թէ Գայիանեան այլ և Յովհաննեան օր. դպ. չը կարողացանք գտնել, չը նայելով որ Գայիանեան օր. դպրոցի ֆիզիքական կաբինէտը շատ հարուստ է պատկերներով։ Վիճաբանութիւնից յետոյ վերջին խօսքը իմն էր, որից յետոյ ստացայ կրկին ծափահարութիւն։ Մի քանի օրից յետոյ «կրօնից» դասախօսեց հայր Ղազարեանցը և յաջող։ Ամբողջ ուս. ժողովի տեղութեան ժամանակ կրօնից դասախօսել ենք միայն երկու դատական ուսուցիչ քահանաներ և երկուսս էլ ստացել ծափահարութիւն։ Բայց թէ ուր էին մեր յայտնի մանկավարժ աստուածաբանները, այդ չը գիտեմ։ Բայց եթէ այդ ցոյցերը—ծափահարութիւն, շնորհակալութիւն, bravo և այլն ուս. ժողովի կողմից եղել է մի պոլիտիկ, ձևի համար ակամայ մի շողոքորթութիւն, միմեանց հետևողութիւն (подражаніе), դա շատ ցաւալի է։ Նշանակում է ամբողջ ուս. ժողովը գործել է հակառակ իր կոչման և համոզման։ Այսքանը բաւական է։

Թէլաւի քաղ. ուս. կրօնուսոյց Աբել քահանայ Սուքիասեանց։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ խնդրում են տպել հետևեալը։ Երաժշտութեան վարժապետ Խ. Մ. Կարա-Մուրզա դասեր է տալիս պիանօի, սօլֆէջիօի և երաժշտական թէօրիայի։ Նա ուսուցանում է Ա. Հէնդելտի մանկավարժութեամբ, տէխնիկայի դասերը տալիս է հետևելով Ա. Շմիտին, իսկ թէօրիայի մէջ հետևում է Օ. Լաբէին։ Անցնում է պրակտիկայի լիակատար ընթացքը Բրասսերի և Խոտտիի մեթոդով և պատրաստում է աշակերտներին կոնսերվատորիայի համար։ Պարոնը ընդունում է նմանապէս պատուէրներ պարտիտուրների և փոխարկում է պիէսաները պիանօի և օրկեստրի համար։ Խնդրում է դիմել Իրան Բաղարեայա փողոց, Իշխանուհի Երիտասարդի տան, № 16։ Մենք մեր կողմից աւելորդ չենք համարում աւելացնել որ պ. Կարա-Մուրզա մի երիտասարդ զրիչցի հայ է, որ եկած է Թիֆլիս քանի մի օր սրանից առաջ։

—

Մենք լսում ենք որ ԹԻՖԼԻՍԻ քաղաքային հիւանդանոցի կառավարիչ, վիրաբուժ բժշկապետ Գոլբէկ, կանչված է Էջմիածին։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են։ «Կարդալով ձեր լրագրում որ Ղարաբաղի հանգուցեալ առաջնորդ Անդրէաս արքեպիսկոպոսը, իր մահից մի քանի ամիս առաջ հրամայել էր որ Շուշու բոլոր եկեղեցիներում հայ քահանաները քարոզներ ասեն կիրակի օրերը, որպէս զի մրցին բողոքականների հետ, մենք շատ ուրախացանք։ Ցաւալի է որ նոյն կարգադրութիւնը հոգևոր իշխանութիւնը չէ անում և Բաքուի հայ-լուսաւորչական եկեղեցիների վերաբերութեամբ»։

—

Կիրակի օր հրատարակվեցաւ Թիֆլիսում «Вѣстникъ Кавказа» լրագրի № 16, որ վաղուց արդէն դուրս եկած չէր։ Լրագիրը հրատարակվում է պ. Զանցեվի խմբագրութեամբ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են որ Ս. Պետերբուրգի կանանց բժշկական կուրսերի դրութիւնը կարելի է այժմ ապահոված համարել, որովհետև շատ նուիրատուութիւններ են անում զանազան անձինք յօգուտ յիշեալ կուրսերի։

—

Լրագիրներում կարդում ենք, որ դիտաւորութիւն կայ Ռուսաստանում հաստատել մի մասնագիտական դպրոց շաքարագործութեան համար։ Եւ այդ դպրոցը պէտք է հիմնվի նոյն իսկ ռուսաց այն նահանգներից մինի մէջ, որտեղ բուսնում է ամենից աջող կերպով ճակնդեղը, որից և շինում են շաքար Ռուսաստանում։

—

Թիֆլիսի ռուսաց օպերայում հրաւիրված է երգչուհի տիկին Մէնշիկովա, որ այս օրերս արդէն երգեց մի քանի անգամ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, 20 սեպ.

Անցեալ տարի Գրիգոր եպիսկոպոսը շնորհ բե-

բելով Սալմաստ, այդ գաւառի գիւղացիներին, համաձայն իր բարի նպատակին, համոզելով կարգադրեց, որ իւրաքանչիւր գիւղի գիւղացիք իրանց գիւղում ուսումնարաններ չինեն: Արդարև սրբազանի ամեն մի բառը անպտուղ չը մնաց, ամեն գիւղացիք իրանց կարողութեան չափ ուսումնարան պատրաստեցին: Բայց դժբաղդաբար, Ղալասար գիւղը, որը ամենից հարուստ գիւղացիք ունի, դեռ այդ գիւղի ուսումնարանի չինութիւնը չէ աւարտվել: Անցեալ տարի այնքան յետաձգեցին չինութիւնը, մինչ հասան հոկտեմբեր ամսի վերջերին, այդ ժամանակ փոյթ առ փոյթ որմերը բարձրացրին, և յարկի փայտերը վրա դցեցին, այնուհետև իրը չինութիւնը աւարտեալ, իւրաքանչիւր անձ հանդիստ տունը քաշվեցաւ: Հէնց այդ ժամանակն էր որ աշնանային անձրևները տեղացին և այդ կիսակատար չինութեան որմերը մինչի կէս փլցրին. ինչ անես, կրկին չինել չէր լինի, որովհետև անցեալ տարվայ վաղահաս ձմեռը վերահասնելով այնպէս մնաց:

Այս տարի գարնանը պատուելի հոգաբարձուքը իրանց ձեռնարկած գործի աւերումը տեսնելով, շուտով ցրտատար որմերը փլցնելով նորէն չինեցին, բայց, տարաբաղդաբար, ինչպէս անցեալ տարվանը, նոյնպէս էլ այս տարի, կիսատ թողած անտարբեր մնացած են: Արդեօք չը լինի թէ գորանք, Յեսուայ խնդրանաց պէս, ամառը յետ դառնալու յոյս ունեն. չէ՞ որ ձմեռը վրա հասնում է. ինչու թերութիւնները չեն աւարտում: Եթէ այդ ուսումնարանի հաստատութիւնը գորանց դուր չէ գալիս, գոնեա յարկը ծածկեն, որ ձիւն անձրևը չը տեղայ մէջը: Դարձեալ պատուելի պարոնների համար դարդակ պարծանք է:

Շէյխի Պօլսից վերադառնալուն համար հետաքրքրեալ տեղեկութիւնը ունինք Բարթուղիմէոս առաքելոյ վանահայր Յովհաննէս Ծ. վարդապետից: Շէյխը Պօլսից փախստական եկաւ, և իր որդին, Շէյխ-Կամար հօր գալուստը իմանալով բազմաթիւ հեծելազօրքով դիմաց առաջ: Ե. վաղը որ գալիս անցնում էր դէպի Նովչա, մենք էլ ամբոխով դիմեցինք առաջ և ողջունելով հիւր հրաւիրեցինք մեր վանքում, և նա սիրով ընդունեց մեր հրաւէրքը: Ե. յայտնց շնորհակալութիւն հետևեալ բառերով. «Շնորհակալ եմ ձեզանից մեզ արած ընդունելութեան համար: Ե. վաղուց յայտնի է մեզ հայոց ազգի մի այդպիսի բարեսիրտ և ազնիւ ազգութիւն լինելը, որը նախնեաց ժամանակով միշտ ուսնեցել են մերոցս հետ սիրոյ և բարեկամական յարաբերութիւններ: Դարձեալ և մեր կամքն էլ այն է, որ նոյն յարաբերութիւնները չը մոռացվին մեզանում: Ե. այժմն տալիս եմ միամտութիւն որ իմ ազգից այսուհետև մի վնաս հասնելու չէ հայոց ազգութեան:» Շէյխը Պարսկաստանի հետն էլ բարեկամութիւն էր յայտնում:

Բայց դեռ իջևանելուց առաջ Պաշկալէյի փաշան դեսպան է ուղարկել ճանապարհին Շէյխին ասելով՝ թէ մեք ծանուցում չունենք ձեր Պօլսից արձակման մասին, և դուք անցնելու չէք մինչ մեր Պօլսից տեղեկութիւն ստանալը: Սակայն Շէյխը դեսպանին անարգելով, յետ էր դարձրել:

Օրերս նորից լուր ստացանք որ Շէյխի և փաշայի մէջ պատերազմ է եղել (Պօլսից ստացած պատասխանի համեմատ) և փաշան 200 ասկար կորցնելով յետ է դարձել Պաշգալէ, սպասելով Պօլսոյ օգնութիւնը:

Պարսկաստանի և Շէյխի համար այնքանս ունիմք դրելու: Ամիր-Նիզամ պարսից ընդհանուր զօրաց հրամանատարը, որ այժմ Ուրմիումն է, դեսպան ուղարկել էր Շէյխի մօտ, բայց խօսակցութիւնները դեռ մեզ յայտնի չեն:

* * *

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Բէյտերի հեռագրական գործակալութիւնը» հաղորդում է որ Թիւրքիայի առաջին մինիստրը ներկայացրեց սուլթանին մի ծրագիր, որով պահանջում է նախ՝ հաստատել միանման յարաբերութիւնները Թիւրքիայի և այլ պետութիւնների մէջ, երկրորդ՝ մինիստրների պատասխանատուութիւնը, երրորդ՝ պատերազմական ծախսերի փոքրացնումը և ժանդարմերիայի ընդարձակումը և չորրորդ՝ Հայաստանի մէջ բէֆորմների իրագործումը: Սուլթանը դեռ ևս իր կարծիքը չէ յայտնել ծրագրի մասին:

—Լիսաբոնից հեռագրում են որ Պորտուգալիայի մայրաքաղաքում այս օրերս պատահեցան անկարգութիւններ: Հանրապետական կուսակցութիւնը կազմեց մի մեծ ժողով, որտեղ խօսում էին ուղղակի թագաւորի դէմ: Աղմուկը շարունակվեց և փողոցում: Ժողովը ցրվեցաւ զինուորված ոյժով:

—Եգիպտոսից հաղորդում են որ Արաբի-փաշայի հետ շատ վատ են վարվում բանտի մէջ: Նրան մինչև անգամ արգելում են ծխել, մի զուարճութիւն, որից արևելցին, առհասարակ, դժուար թէ կարողանայ իրան զրկել:

—Մինչև այժմ ազատամիտ կուսակցութիւնները Գերմանիայում բոլորը 209 կանդիդատներ են ներկայացրել պատգամաւորների ժողովում, այն է՝ պրոգրէսիստները ներկայացրել են 100, ազգային-ազատամիտները—109, սէցէսսիոնիստները—50: Ահա թէ ինչու կենտրօնի առաջնորդները մեծ եռանդ են ցոյց տալի ներկայ ընտրութիւնների ժամանակ: Պ. պ. Վինդհօրստ և Շորլօմեր-Ալտ վերջին ժամանակներում այցելեցին բէյնեան քաղաքների կաթոլիկ ընտրողական ժողովների մի ամբողջ շարք և ամեն տեղ մեծ ճառեր խօսեցին: Առանց հարկաւորութեան կղերական կուսակցութեան այդ պարագլուխները ի հարկէ, արշաւանք չէին սկսի: Կղերականները վախենում են, ինչպէս երևում է, մի քանի տեղեր կորցնել բէյնեան քաղաքներում:

—«Daily News» լրագրին Կ. Պօլսից հեռագրում են հոկտեմբերի 8-ից: Լուր է տարածվել, որ մեծ վիզիրը հրաժարական տուեց: Նա համաձայնվում է իր պաշտօնի մէջ մնալ միայն այն դէպքում, եթէ կառավարութիւնը կընդունի անկեղծ համաձայնութեան քաղաքականութիւնը Անգլիայի և Ֆրանսիայի հետ և եթէ սուլթանը կը թոյլ տայ իրան մի քանի անհրաժեշտ վերանորոգութիւններ մտցնել ներքին վարչութեան և դատաստանական վարչութեան մէջ:

—«Daily News» լրագրի թղթակցի խօսքերով, Արաբին եգիպտական բանտի մէջ իր կեանքը վտանգի մէջ է համարում և գանգատվում է, որ իր հետ բանտի մէջ ամենախիստ կերպով են վարվում: Լրագրի խօսքերով, մինչև դատաստանական քննութիւնը եթէ Արաբիի հետ մի որ և դժբաղդութիւն պատահի, այն ժամանակ այդ բանի պատասխանատուութիւնը բացառապէս միայն խեդիվի վրա չի ընկնի, որովհետև Արաբին անգլիացիների գերի է:

—«Daily Chronicle» լրագրի Բերլինից ստացած մի հեռագրի խօսքերով, եգիպտական խնդիրը վճռելու համար Անգլիայի և Թիւրքիայի մէջ եղած բանակցութիւնները շատ դանդաղ են ընթանում: Բայց այդ երկու պետութիւններն ևս առանձին կերպով չեն շտապում, որովհետև գործերի ներկայ դրութիւնը Եգիպտոսում վտանգաւոր չէ համարվում ոչ հերօական խաղաղութեան համար, ոչ էլ Եգիպտոսի հանդստութեան համար:

—«Բէյտերի ընկերութեանը Կայիրէից հեռագրում են հոկտեմբերի 14-ից, որ Մարկ Նէպիր կը պաշտպանի Արաբիին զինուորական դատարանի առաջ, որովհետև եգիպտական կառավարութիւնը թոյլ տուեց Արաբիին իր համար փաստաբան ընտրել, մի և նոյն է տեղացի կը լինի նա, թէ օտարազգի:

—Կ. Պօլսից հեռագրում են հոկտեմբերի 5-ին: Բրուսսայի նահանգապետ Ահմէդ-Վէֆիկ այսօր հեռացրած է պաշտօնից այն բանի համար, որ չը կատարեց Բ. Դրան հրամանները: Այդ հրաժարեցնելը այստեղ ապացոյց են համարում այն բանի, որ առաջին մինիստրը վճռել է եռանդով գործել:

—Կայիրէից հեռագրում են հոկտեմբերի 5-ին: Բրիտանական հիւպատոս Մալէտ մինիստրութիւնից մի յայտագիր ստացաւ, որի մէջ ասված է, թէ անհրաժեշտ է ապստամբներին խիստ պատիժ տալ կարգը վերականգնելու համար: Վատանգաւոր կը լինէր ուշացնել ապստամբների դէմ եղած դատը, և չէ հարկաւոր այնպիսի միջոցներ գործ դնել, որոնք յարմար չեն արևելեան երկիրներում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հնձի ժամանակը երկրագործի վրա: Յայտնի է, որ զանազան գօտիների և տարվայ զանազան եղանակների պատճառով, հունձքը զանազան տեղերում զանազան ժամանակներումն է կատարվում: Հունձքը մինչև տասն ամիս է կատարվում, որովհետև հաստատ կարելի է ասել, որ միայն երկու ամիսների ընթացքում երկրագործի ոչ մի անկիւնում հունձ չէ լինում: Այդ պատճառով հետաքրքիր կը լինէր մեր մոլորակի հնձի ժամանակ ցոյց տուող տօմարը ներկայացնել: Աւստրալիայում, Նոր-Զէլանդիայում, Չիլիի մեծ մասում և Արգէնտինեան հանրապետութեան մի քանի տեղերում հացը հնձում են յունվարին, հետևեալ ամսին սկսվում է հունձքը Արևելեան Հնդկաստանում, և ոչքան որ մենք դէպի հիւսիս առաջ կերթանք, այնքան կուշանայ հաց հնձելու ժամանակը: Մեքսիկայում, Եգիպտոսում, Պարսկաստանում և Սիրիայում հունձքը ապրիլ ամսին է կատարվում, այնուհետև Փոքր-Ասիայի հիւսիսային մասում, Զինաստանում, Եապոնիայում, Յունիսում, Ալժիրիայում, Մարոկկոում և Տէխասում հունձքը կատարվում է մայիսին: Կալիֆորնիայում, Սպանիայում, Պորտուգալիայում, Իտալիայում, Յունաստանում, Սիցիլիա կղզու վրա և Ֆրանսիայի հարաւային մի քանի նահանգներում հունձքը լինում է յունիսին: Մնացած Ֆրանսիայում, Աստրօ-Ունգարիայում, Հարաւային Ռուսաստանում և Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների մեծ մասում հունձքը յուլիսին է սկսվում: Օգոստոսին ցորենը հաւաքում են Գերմանիայում, Բելգիայում, Նիդերլանդիայում, Ռուսաստանի մեծ մասում, Դանիայում և Նիւ-Եօրկում: Վերջապէս սեպտեմբերին հասնում է Շոտլանդիայի, Շվէցիայի, Նորվէգիայի, Կանադայի մեծ մասի և Ռուսաստանի հիւսիսի հերթը. այդ երկիրների ամենաբարձր հիւսիսում հունձքը հոկտեմբերին է կատարվում: Այդպիսով, միայն նոյեմբերը և դեկտեմբերը այնպիսի ամիսներ են, որոնց ժամանակ ոչ մի տեղ չեն հնձում:

* * *

Միջանների ուժը: Ֆրանսիական բնագէտ Պասօին ենք պատական մի շարք սրամիտ գիւտերի և ամենափոքրիկ սայլակների համար միջանների զարմանալի ուժը որոշելու համար: Նրա փորձերից երևեցաւ, որ ամենափոքրիկ միջանները համեմատաբար ամենաուժեղներն են: Վերցնենք, օրինակ, մայիսեան բզեզը: Առանձին թամբի միջնորդութեամբ, բզեզը կապում են թելի վրա և նա բարձրացնում է կճեպը, որը լցրած է մէկ գրամ ծանրութիւն ունեցող առարկաներով: Այդպիսով, Պասօ հաստատեց, որ մայիսեան բզեզը, համեմատաբար, 20 անգամ աւելի այժ ունի, քան թէ ձին. իսկ մեղուն 30 անգամ աւելի ուժեղ է: Ձին կարող է իր քաշի $^6/_7$ մասը տանել, մայիսեան բզեզը տանում է 14 անգամ աւելի իր քաշից, իսկ մեղուն—20 անգամ աւելի:

* * *

Միացեալ-Նահանգներում կեղծ ատամների պատրաստելը: Այդ գործը Միացեալ-Նահանգներում արդիւնաբերութեան մի նշանաւոր ճիւղ է կազմում: Երկրում գտնվում են 12 գործարաններ, որոնք իւրաքանչիւր տարի պատրաստում են մօտ 10,000,000 կեղծ ատամներ: Այդ արդիւնաբերութիւնից ստացվող ընդհանուր եկամուտը մէկ միլիոն դօլլար է: Ատամները լցնելու համար տարեկան 500,000 դօլլարի ոսկի է ծախսվում: 1778 թվից մինչև 1883 թիւը ոսկու տեղ արճիճ էր գործածվում: Նիւ-Եօրկում այնպիսի ատամնաբոյժներ են գտնվում, որոնք ալմաններով են լցնում ատամը: Ատամների լցնելը թեթևացաւ այն ժամանակից, երբ այդ բանի համար առանձին մեքենաներ և գործիքներ հնարվեցան: Ամբողջ կրթված աշխարհի համար ատամնաբուժական գործիքները միայն Միացեալ-Նահանգներումն են պատրաստվում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ՏՎԵՐ, 11 հոկտեմբերի: Նիկոլայեվսկի երկաթուղու ուղղութեամբ և շրջականերում տօրֆային մեծ հրդեհներ կան:

ԽԱՐԿՕՎ, 11 հոկտեմբերի: Պոկրովսկի տօնավաճառը կենդանանում է:

ԻՐԿՈՒՏՍԿ, 11 հոկտեմբերի: 15 ասպիճան տաքութիւն է: Այսօր տեխնիկական ուսումնարանի հիմքը կը դցվի: Շինութեան նախահաշիւը 100,000 ռուբլ է:

ՉԻՏԱ, 11 հոկտեմբերի: Զաբայկալսկի շրջանի մէջ 1882 թուականի ընթացքում 95 պուդ ոսկի է հանված:

ՓԱՐԻԶ, 11 հոկտեմբերի: Փողոցների վրա ազդարարութիւններ երևացին, որոնք հրաւիրում են ազգաբնակութեան հրդեհներ դցել: Կալանաւորված են սօցիալական շարժման 18 առաջնորդներ: Ֆրանսիական ազգային ժողովների բացումը նշանակված է նոյեմբերի 9-ին:

ՀՌՕՄ, 11 հոկտեմբերի: Ծովային մինիստրը պատուիրեց կառուցանել 10 մինակիր նաւեր Անգլիայի մէջ և 12 Իտալիայի մէջ: Աւստրիան պահանջեց յանձնել իրան այն տրիեստացիներին, որոնք կալանաւորված են Ռոնկիի մէջ գտնված ռումբերի գործի պատճառով:

ԼՕՆԴՕՆ, 11 հոկտեմբերի: Գենեռալ Ուէլսլէյ Եգիպտոսից Անգլիա ուղևորվեցաւ: Եգիպտական զօրքերի կազմակերպութեան նախագիծը, որ կազմել է Բեկեր-փաշա, եգիպտական կառավարութեան հաւանութիւնը ստացաւ:

ՎԻԵՆՆԱ, 11 հոկտեմբերի: Պատգամաւորների ժողովի անդամները հոկտեմբերի 26-ին կը ներկայանան աւստրիական կայսրին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 հոկտեմբերի: „Правит. Вѣст.“ լրագիրը հաղորդում է, որ „Московскій Телеграфъ“ լրագրի համարների հատով ծախվելը նորից թոյլ է տուած: „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ միսը տեղափոխելու համար սառուց կրող վագոնները, որոնք հնարված են ինժիներ Զացկուց, փորձերի ենթարկելուց յետոյ, ցոյց տուին իրանց գործնական լինելը: Պատրաստված են 20 այդպիսի վագոններ միսը Ս. Պետերբուրգ տանելու համար օրական մի վագոն: Նովգորոդի նահանգի հիւսիսային մասում մի քանի տասնեակ վերստ տարածութեան վրա անտառներ ու թուփեր են այրվում: „Голосъ“ լրագիրը հաղորդում է, որ 34 օֆիցերներից, որոնք գլխաւոր շտաբի ակադեմիայի մէջ քննութիւն տուին, ընդունված են միայն 23 հոգի, որովհետև ընդունելութիւնը սահմանափակ էր:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ԲԵԼԳՐԱԴ, 11 հոկտեմբերի: Սերբական թագաւորի վրա, որ վերադարձել է Բելգրադ, մի կին ատրճանակ արձակեց: Թագաւորը անվնաս մնաց:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 հոկտեմբերի: „Прав. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. Նորից թոյլ է տուած „Московскій Телеграфъ“ լրագրի համարների հատով ծախվելը, որ արգելված էր յունիսի 7-ին: „Голосъ“ լրագիրը հաղորդում է, որ Խարկովի դումման որոշեց նորից միջնորդել տեխնոլոգիական ինստիտուտի շուտ բացման մասին: „Новости“ լրագիրը հաղորդում է. ենթադրված է բողոքված պարտամուրհակներով պարտքի առնելը ուղղակի յանձնել դատաստանական պրիստաւներին: Դատաստանի քննութեանը պարտամուրհակները միայն այն ժամանակ կենթարկվեն, երբ պարտատերը մուրհակը կեղծված կը յայտնէ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 հոկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 25 կ., երկրորդ 91 ր., երրորդ 91 ր. 25 կ., չորրորդ 90 ր. 25 կ., հինգերորդ 90 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 208 ր. 50 կ., երկրորդ 202 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ր., երկրորդ 89 ր. 25 կ., երրորդ 89 ր. 12 կ., ոսկի 8 ր. 17 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24,25 պէնս, Ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 206 մարկ 37 պֆ., Փարիզի վրա 254 ֆրանկ 50 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սորվեցնում եմ **ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ և ՌՈՒՍԱՑ** լեզուներով. պայմանների մասին կարող են դիմել ինձ մօտ **ԶՈՒԲԱԼՕՎԻ** քարվանսարայ, Գասպարեանցի մագազինում ամեն ժամանակ։

ՍՄԲԱՏ ԳԻՏԱՏԱՐԵԱՆՑ

Պատիւ ունեմ յայտնել յարգելի հասարակութեանը, որ նորերումս ստացայ մեծ քանակութեամբ **ՏՂԱՄԱՐԴՈՑ ՁՄԵՌՈՒԱՑ ՊԱԼՏՕՆՆԵՐ** և կօշիկներ, որ վաճառում եմ ձեռնտու գներով։ Մեծ Բազարխանայում № 7 խանութը։

ԱՒԵՏԻՔ ՕՀԱՆԵԱՆՑ

1—5 (1)

Հոկտեմբերի 1-ից **ՔՐԷՀՈՎ** է տըբվում **ԽԱՆՈՒԹ** երկու մուտքերով, երկու **ՍԵՆԵԱԿՆԵՐՈՎ** վերին յարկում և մառանով տ. Խաբլօվի, Հաւլաբարի կամուրջի մօտ **ՇԱԴԻՆՕՎԻ** քարվանսարայի հանդէպ։ Ցանկացողները կարող են դիմել Ելիզավետինսկայա փողոց Վարվարա Խաբլօվի տունը, № 71։

2—3

Համաձայն § 26 պանդոկների կանոնադրութեան, պանդոկների, ուտեստների խանութների և իջևանների ընկերութեան պատգամաւորները, պարտաւոր են նոյեմբերի 1-ից ոչ ուշ, ձեռնարկել միջին ակցիզի բաժանմանը եկող 1883 թ-ի համար, որի համար Թիֆլիսի ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խնդրում է վերոյիշեալ հիմնարկութիւնների տէրերին, ներկայ թ-ի նոյեմբերի 1-ից ոչ ուշ ստանալ վարչութենից վկայականներ յիշեալ հիմնարկութիւնները բացանելու 1883 թ-ի համար։ Հակառակ դէպքում նրանց հետ վարչութիւնը կը վարվի պանդոկային կանոնադրութեան §§ 18 և 35 համաձայն։

2—3

Ներսիսեան դպր. աւարտած և ուսուցչութեամբ պարապած մի երիտասարդ կամենում է, ձեռնտու պայմաններով, ուսուցչի պաշտօն ունենալ կամ քաղաքում կամ թէ գիւղում։

Պայմանները կարելի է իմանալ Գոլովինսկի պրոսպեկտի վրա, „Վարշավսկայա պեկարնեայ„ կոչուած խանութում պ. Մարտիրոս Չախնապարեանից։

4—5

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

սիստեմատիքական ընթացք

Գրիգորի Վարձելեան

Հայոց միջնակարգ ուսումնարանների համար

Մասն առաջին (ամբողջ թուեր)

Մամուլի տակն է և սեպտեմբերի առաջին օրերին լոյս կը տեսնի նոյն խնդիրների երկրորդ մասը (կոտորակ թուեր և երրորդական կանոններ)։

Գինն է 40 կոպ.

Ուսումնարաններին զիջում 20%։ Ծախվում է Վ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան խանութում։

Օտար տեղերից դիմում են այս հասցէով Тифлисъ, въ Агентство В. Шавердова։

Տրվում է վարձով Սաղի մեծ փողոցի վերայ Ալէքսանդր Թահիրեանցի նոր շինած տներում, վերին յարկում, ԵՐԵՔ ԵՒ ՁՈՐՍ ՍԵՆԵԱԿՆԵՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԼՈՒՍԱՒՈՐ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ իրանց խոհանոցներով ԵՒ ՑԱՐՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, նոյնպէս առանձին մէկ մէկ սենեակով. ներքին յարկում խանութներ արժան գներով, պահեստներ (подвалы) 20—30 սաժէն երկարութեան և 10 արշին լայնութեան իր ՋՐՀՈՐՆԵՐՈՎ ՍԱՌՑԱՏԵՂԵՐՈՎ. շատ յարմար է գինու, հացի, երկաթի և այլ մթերքների համար վարձել, մանաւանդ սպիրտի զաւօդի և սլեսարնի վերաբերեալ գործարանի համար։ Նոյնպէս ավում է Հայոց փողոցին կից Պրիկազնի ուլիցում № 10 տան ներքին յարկը եօթն օթախից բաղկացած լուսաւոր և գեղեցիկ բնակարան իր կուխնայով, ներքնատնով, առանձին պարադնի մուտքով։ Նոյն տեղում № 7 տան վերին յարկը չորս օթախից բաղկացած բնակարան իրա կուխնով, ներքնատնով և ամեն յարմարութիւնով։ Գների համար խօսել կամեցողը կարող է իմանալ իրանից՝ ԹԱՀԻՐԵԱՆՑԻՑ ԿԱՄ ՆՐԱ ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆՑԻՑ։

3—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է ունենալ որ և է պաշտօն ՄԱԳԱԶԻՆՆԵՐՈՒՄ կամ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐՈՒՄ Թիֆլիսի մի յայտնի անձնաւորութեան երաշխաւորութեամբ։

Հասցէն կարելի է իմանալ „Մշակի„ խմբագրատանը։

4—5

ԹԷՅ առաջին հունձի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւէտ։ Այդ թէյից **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ։ Օրինակ. Լաւ ԿՕՆԳՕ թէյ 1 ր.—1 ր. 20 կոպ., պատուական ՍԱՆՖԱ թէյ 1 ր. 40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ր. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ր.—2 ր. 50 կ., գեղեցիկ ԿԱՑՍԱՈՒ թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ ֆու-չու-ֆու թէյ 2 ր. մաքուր թէյ առանց թղթի։ Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր.—60 ր., երկաթէ ԳՐԻՋՆԵՐ ամբողջ Անդրկովկասի համար, շօկոլադ ֆրայ, Շեվիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ մայրերի համար, հրացաններ ԴԱՈՒ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ վեբլի, ԹԱՄԲԵՐ Բարնսբիի, կօլմանի նշշրշտայ, ԱԼԲՕՄՆԵՐ Շվարցի կէս գնով։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ, ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՅՈՒՄ** № 156, 157, 158, 159 և 100։

56—100

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԷՆՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ։

„Ժուրնալ դ'Օրիան“ լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը։

„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ։

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի վիէննայում դիմելով հետևեալ հասարակ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուսմի վալնիկներ մրամրանի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռեվոլվերներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոնները. (գուլաններ) ըէվոլվերի, սիգար Ռէմինգտոնի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարօվի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կոֆէ էլինէմի և Միխէլսօնի. Պետերբուրգում 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գլինէվաճառների, հանքային և դարեջրի (для зельтерскихъ водъ и пива) դուլթուկ (пухъ), պաղնոներ սամովարի և չայու, դանակ չանդալ գանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. միս կարելու մաշինայ. Անգլիական ուլթներ, բրիտանկի չայնիկներ, կաֆէինիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտրներ—ջուր մաքրելու, կրակմալ կարօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ծակոց, թուղթ փոշի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարեռանատակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրուժէ, վարշավի և բրիտանկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուլիչկէ.ք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусъ) ֆելչատկէ.ք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերէյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) Միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

154—180

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

ՐԱՖՖԻ

ԽԱՄՍԱՅԻ

ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Գիրքը բաղկացած է 467 երեսներից

Թիֆլիսում վաճառվում է՝

„Մշակի“ խմբագրատանը.—„Կենտրոնական գրավաճառանոցում“ Միրիմանովի տանը № № 3 և 4. Պ. Զաքարիայ Գրիգորեանցի „Կովկասեան գրավաճառանոցում“.—Պ. Էնֆիաճեանցի ծխախոտի խանութում.—Պ. Շահինեանցի ծխախոտի խանութում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել կամ յիշեալ տեղերը, կամ ուղղակի հեղինակին հետևեալ հասցէով։

ТИФЛИСЪ. Редакція „Мшакъ“.

РАФФИ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ, ԹԷՅԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՓՈՓՐԱՑՈՒՄՆ

(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷԱ № № 156, 157, 158, 159 և 160.

Համեմատեցէք թէյ

1 ր.	10 կ.	թէյի հետ ամեն տեղ	1 ր. 30 կ.
1 „	20 „	. . . . .	1 „ 60 „
1 „	40 „	. . . . .	1 „ 90 „
1 „	60 „	. . . . .	2 „ 20 „
1 „	80 „	. . . . .	2 „ 50 „
ամենալաւը	2 ր.	. . . . .	3 „ ——

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօկոլադի և կակաո-ֆրայ էսսենցիայի, Գալմերի բիսկվիտների, Բազրի կօնֆեկտների, Շեֆիլդի դանակների, Ցուրնեի գրիչների, Դաուի հրացանների, Վեկլիի ըէվոլվերների, Բարնսբիի թամբերի, Մեկինի ամաններ, կոլմանի կրամալ և մանանեխ, Շվարցի ալբոմներ և այլն և այլն։

9—100

Дозволено цензурою, Тифлисъ, 12 Октября 1882 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. зак. д.